

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 47/4

17 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Ջերմուկ Առողջարան» ՓԲԸ 17.09.2015 թ-ի գանգատը վարչական վարույթը վերսկսելու և կիրառված արգելանքը փոփոխելու վերաբերյալ:

#### **«Ջերմուկ Առողջարան» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.**

ՀՀ ֆինանսների նախարարության ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության աշխատակիցների կողմից 15.05.2015 թ-ին կազմվել է թիվ 5010981 ակտը, որով «Ջերմուկ Առողջարան» ՓԲԸ-ին առաջարկվել է ՀՀ պետական բյուջե որպես չվճարված ԱԱՀ մուծել լրացուցիչ 12.626.299 դրամ: Նշված ակտը ընկերության կողմից 25.05.2015 թ-ին բողոքարկվել է վերադասության կարգով:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 14.07.2015 թ-ի թիվ 28/1 որոշմամբ ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժվել է, իսկ ակտը մնացել է ուժի մեջ:

Նշված որոշումները հայցվորի կողմից 07.09.2015 թ-ին բողոքարկվել են ՀՀ վարչական դատարան, գործն ընդունվել է վարույթ:

ՀՀ ֆինանսների նախարարության 5-րդ բաժնի առաջատար մասնագետներ Թ.Սուքիասյանի և Լ.Մուրադյանի 07.09.2015 թ-ի թիվ 030906 որոշմամբ 12.806.320 դրամի չափով արգելանք է դրվել հայցվորին պատկանող ՀՀ Վայոլ Ձորի մարզ, ք.Ջերմուկ, Շահումյան 20 հասցեում գտնվող գույքի, ինչպես նաև դրամարկղի և բանկային հաշիվների վրա:

Կիրառված արգելանքի միջոցները, մասնավորապես՝ հայցվորի դրամարկղի և բանկային հաշիվների վրա դրված արգելանքի պատճառով հայցվոր ընկերությունն փաստացի զրկվում է իր մի շարք դրամական պարտավորությունների կատարման հնարավորությունից, այն է՝ իր աշխատակիցներին աշխատավարձ վճարելու, տարբեր ընկերությունների հետ կնքված սպասարկման պայմանագրերով ստանձնած վճարման պարտավորությունների, ինչպես նաև «Ամերիա» բանկի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունների կատարման հնարավորությունից, ինչը, փաստացի, ընկերության հետագա գործունեությունը դարձնում է անհնարին:

«Ջերմուկ Առողջարան» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանում է ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի թիվ 1 ամառանոցը, որը երրորդ անձանց որևէ իրավունքով ծանրաբեռնված չէ, չի հանդիսանում գրավի առարկա և, որի շուկայական արժեքն ավելի քան բավարար է ՀՀ ՖՆ կողմից նշված գումարի գանձումն ապահովելու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով ընկերությունը խնդրում է վերսկսել վարչական վարույթը, վերացնել ՀՀ ՖՆ 07.09.1015 թ-ի թիվ 030906 որոշմամբ հայցվորի գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքը, որպես նշված գումարի ապահովում արգելանք դնել «Ջերմուկ Առողջարան» ՓԲԸ-ին

սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Վայոց Ձորի մարզի Ջերմուկ քաղաքի թիվ 1 ամառանոցի վրա:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ֆինանսների նախարարի 31.10.2014 թ-ի թիվ 5010981 հանձնարարագրի համաձայն «Ջերմուկ առողջարան» ՓԲԸ-ում իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 15.05.2015 թ-ի թիվ 5010981 ակտը (այսուհետ նաև Ակտ), որն ընկերության կողմից վերադասության կարգով գանգատարկվել է: Մասնավորապես, Հանձնաժողովի 14.07.2015 թ-ի նիստում քննության է առնվել «Ջերմուկ առողջարան» ՓԲԸ 25.05.2015 թ-ի գրությամբ բերված գանգատը ՀՀ ՖՆ ստուգումների կազմակերպման և դիտարկման վարչության 15.05.2015 թ-ի թիվ 5010981 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 28/1 որոշումը, որի համաձայն Ակտը թողնվել է անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժվել:

Այնուհետև, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի դրույթներով ՀՀ ֆինանսների նախարարի կողմից 04.09.2015 թ-ին հրապարակվել է թիվ 030906 հանձնարարագիրը «Ջերմուկ առողջարան» ՓԲԸ-ի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ: Արդյունքում 07.09.2015 թ-ին կայացվել է գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 030906 որոշումը, որով 12.806.320 դրամի չափով արգելանք է դրվել ընկերությանը պատկանող գույքի, դրամարկղի և բանկային հաշիվների վրա:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ 12.11.2015 թ-ին ընկերության կողմից ամբողջությամբ մարվել է գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 030906 որոշման մեջ նշված հարկային պարտավորության գումարը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն. «Պարտավորության մարման նպատակով անհրաժեշտ գումարը համապատասխան գանձապետական հաշիվ մուտքագրվելուց հետո կամ սույն հոդվածով սահմանված կարգով աստիճանական մարման ժամանակացույցը կնքելուց հետո հարկային մարմնի համապատասխան պաշտոնատար անձը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարգադրություն ուղարկել համապատասխան անձանց և մարմիններին արգելանքը վերացնելու մասին:

...

Արգելանք կիրառած անձինք և մարմինները պարտավոր են անհապաղ վերացնել իրենց կիրառած արգելանքը, եթե հարկ վճարողը ներկայացնում է պարտավորությունը լրիվ չափով վճարելը հավաստող անդորրագիրը կամ 29.1 հոդվածով սահմանված կարգով կնքված պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը»:



Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ ընկերության կողմից 12.11.2015 թ-ին ամբողջությամբ մարվել է գույքի վրա արգելանք դնելու մասին թիվ 030906 որոշման մեջ նշված հարկային պարտավորության գումարը, հետևապես գույքի վրա արգելանք դնելու մասին 07.09.2015 թ-ի թիվ 030906 որոշմամբ կիրառած արգելանքը ենթակա է վերացման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո թ ո շ ու մ է՝

Վերացնել գույքի վրա արգելանք դնելու մասին 07.09.2015 թ-ի թիվ 030906 որոշմամբ «Զերմուկ առողջարան» ՓԲԸ-ի գույքի նկատմամբ կիրառած արգելանքը:

Հանձնաժողովի նախագահ՝

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**



